



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. առաջին կիսամյակում /վերլուծություն/

2003թ. առաջին կիսամյակում, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 29557 գործարքներ, որոնք 2002թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 18.3%-ով, 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 17.7%-ով: 2003թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. առաջին կիսամյակում, անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. առաջին կիսամյակում, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13609 օտարման գործարքների 91.3%-ը կազմել են առուվաճառքները, 8.2%-ը նվիրատվությունները և 0.5%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման

գործարքների 46.4%-ը արձանագրվել է Երևան քաղաքում և 48.8%-ը՝ Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. առաջին կիսամյակում, 2002թ. առաջին կիսամյակի համեմատ անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 19.5%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 13.5%-ով: 2003թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 5739 առուվաճառքի գործարքների 67.0%-ը արձանագրվել են Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2002թ. առաջին կիսամյակի համեմատ, Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 11.2%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 29.4%-ով:

2003թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. առաջին կիսամյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		առաջին կիսամյակ 2003թ.	երկրորդ կիսամյակ 2002թ.	առաջին կիսամյակ 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	369.4	298.2	254.7
Արաբկիր	150.0-550.0	257.8	194.0	156.4
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	151.3	122.0	94.2
Նոր-Նորք	90.0-240.0	125.2	106.8	90.9
Ավան	90.0-190.0	118.4	91.8	83.4
Էրեբունի	80.0-300.0	132.7	111.7	85.4
Շենգավիթ	80.0-250.0	129.9	110.5	87.9
Դավթաշեն	100.0-250.0	149.1	108.1	89.3
Աջափնյակ	80.0-220.0	128.9	106.3	82.2
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	128.9	102.7	85.7
Նուբարաշեն	40.0-100.0	65.2	50.5	38.9
Երևան	40.0-970.0	159.7	127.5	104.4

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. առաջին կիսամյակում, Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 25.3%-ով, իսկ 2002թ. առաջին կիսամյակի համեմատ 53.0%-ով:

2003թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում գրանցված Բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի

գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2003թ. առաջին կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 2065 բնակարաններ, որոնց քանակը 2002թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 2.1%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 14.6%-ով:

2003թ. առաջին կիսամյակում ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ.առաջին կիսամյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			առաջին կիսամյակ 2003թ.	երկրորդ կիսամյակ 2002թ.	առաջին կիսամյակ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	61.5	58.9	55.9
	Ապարան	18.0-38.0	27.0	25.7	25.3
	Թալին	18.0-38.0	24.2	22.2	20.2
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	53.4	52.6	51.1
	Մասիս	20.0-85.0	53.9	51.8	48.0
	Վեդի	20.0-45.0	30.7	29.0	28.0
	Արարատ	22.0-40.0	31.2	28.8	26.1
Արմավիր	Վաղարշապատ	35.0-105.0	80.1	73.9	70.8
	Արմավիր	21.0-58.0	44.0	42.2	40.1
	Մեծամոր	17.0-50.0	30.5	29.3	28.2
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.4	29.8	29.1
	Գավառ	20.0-45.0	29.7	29.2	28.5
	Մարտունի	18.0-45.0	28.9	28.3	27.4
	Վարդենիս	12.0-21.0	16.9	16.5	15.8
Լոռի	Վանաձոր	30.0-85.0	60.0	58.3	55.7
	Ստեփանավան	20.0-55.0	31.5	29.0	27.2
	Մայիտակ	17.0-43.0	23.4	22.5	21.1
	Ալավերդի	17.0-40.0	25.0	23.7	21.7
	Տաշիր	15.0-26.0	18.9	18.2	17.4
Կոտայք	Աբովյան	40.0-100.0	80.3	77.0	75.7
	Նոր Հաճն	35.0-75.0	51.0	50.3	49.4
	Բյուրեղավան	17.0-48.0	34.8	33.3	31.5
	Եղվարդ	28.0-55.0	39.7	37.9	35.1
	Հրազդան	18.0-45.0	29.9	28.5	26.7
	Ծաղկաձոր	22.0-95.0	74.6	72.2	71.1
	Չարենցավան	13.0-55.0	30.4	28.9	26.1
Շիրակ	Գյումրի	30.0-97.0	66.5	61.8	58.9
	Արթիկ	17.0-38.0	24.8	23.7	22.1
	Մարալիկ	15.0-45.0	23.1	21.1	20.2
Սյունիք	Գորիս	21.0-45.0	28.9	27.2	25.5
	Կապան	18.0-55.0	28.3	25.8	24.7
	Սիսիան	17.0-57.0	27.2	25.5	22.5
	Մեղրի	17.0-57.0	24.2	22.4	20.6
	Քաջարան	18.0-38.0	17.7	16.5	13.6

Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	34.7	31.2	30.3
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.4	45.1	42.7
	Ջերմուկ	20.0-55.0	39.9	37.8	36.6
Տավուշ	Դիլիջան	15.0-55.0	35.9	32.3	30.8
	Իջևան	23.0-50.0	40.0	39.0	37.7
	Բերդ	15.0-45.0	28.5	27.1	25.7
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.3	24.9	23.9

2003թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 5.1%-ով, իսկ 2002թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 10.5%-ով:

2003թ. առաջին կիսամյակում մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 1941 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 521, մյուս մարզերում միասին վերցրած՝ 1420: 2002թ. առաջին կիսամյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 31.6%-ով, այդ թվում, Երևան քաղաքում՝ 26.8%-ով, մյուս մարզերում միասին վերցրած՝ 33.5%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ առանձնատների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 5.8%-ով, ընդ որում Երևանում՝ 12.3%-ով, մյուս մարզերում միասին վերցրած՝ 3.1%-ով: Ընդ որում 2003թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում գրանցված առանձնատների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների վաճառքի և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները՝

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003 թ. առաջին կիսամյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		առաջին կիսամյակ 2003թ.	երկրորդ կիսամյակ 2002թ.	առաջին կիսամյակ 2002թ.
Կենտրոն	200.0-990.0	372.2	299.2	260.3
Արաբկիր	160.0-580.0	260.5	194.8	159.9
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	153.0	124.3	96.5
Նորք-Մարաշ	180.0-640.0	284.7	246.2	210.4
Ավան	95.0-200.0	120.0	110.3	85.3
Էրեբունի	95.0-320.0	134.2	114.3	91.9
Շենգավիթ	85.0-260.0	131.2	111.0	88.7
Դավթաշեն	100.0-260.0	150.3	110.0	90.2
Աջափնյակ	85.0-230.0	130.5	107.2	85.7
Սալաթիա-Մերաստիա	95.0-250.0	130.5	110.2	89.0
Նուբարաշեն	45.0-110.0	67.6	53.0	40.7
Միջինը Երևանում	45.0-990.0	175.9	143.7	118.0

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. առաջին կիսամյակում, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 22.4%-ով, իսկ 2002թ. առաջին կիսամյակի համեմատ 49.1%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. առաջին կիսամյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			առաջին կիսամյակ 2003թ.	երկրորդ կիսամյակ 2002թ.	առաջին կիսամյակ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	81.2	78.5	73.6
	Ապարան	20.0-45.0	37.8	35.5	33.9
	Թալին	15.0-35.0	27.5	24.8	22.4
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	61.0	58.6	55.6
	Մասիս	27.0-80.0	61.4	59.3	58.4
	Վեդի	25.0-60.0	35.6	34.7	34.0
	Արարատ	25.0-60.0	36.0	34.6	33.4
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	83.4	76.9	74.4
	Արմավիր	35.0-90.0	50.6	47.6	46.2
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	35.9	34.7	33.0
	Գավառ	25.0-65.0	39.1	37.6	36.4
	Մարտունի	20.0-55.0	33.3	32.0	30.5
	Վարդենիս	15.0-45.0	20.5	19.2	18.6
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	67.1	64.2	63.5
	Ստեփանավան	20.0-50.0	32.5	31.8	31.3
	Մալիտակ	17.0-50.0	24.0	23.2	21.5
	Ալավերդի	18.0-50.0	25.8	24.9	22.7
	Տաշիր	15.0-30.0	19.4	18.7	18.2
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	90.4	87.8	85.7
	Նոր Հաճն	35.0-80.0	53.4	51.6	49.6
	Բյուրեղավան	15.0-50.0	37.5	35.1	32.5
	Եղվարդ	23.0-70.0	46.3	43.8	41.5
	Հրազդան	25.0-65.0	39.1	37.2	35.4
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.4	83.6	80.5
	Չարենցավան	25.0-50.0	32.9	32.0	28.8
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	88.0	85.4	84.1
	Արթիկ	18.0-55.0	27.6	25.7	23.9
	Մարալիկ	15.0-45.0	23.6	22.5	21.2

Սյունիք	Գորիս	22.0-65.0	30.9	29.1	26.6
	Կապան	25.0-55.0	30.1	28.2	26.9
	Միսիան	18.0-50.0	27.8	26.2	24.6
	Մեղրի	18.0-40.0	27.6	23.7	23.3
	Քաջարան	15.0-30.0	18.5	17.0	15.3
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.1	34.0	30.9
	Եղեգնաձոր	20.0-65.0	48.3	46.8	46.0
	Ջերմուկ	25.0-60.0	42.2	40.0	38.1
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	38.6	37.0	35.7
	Իջևան	30.0-70.0	40.4	39.5	39.0
	Բերդ	20.0-50.0	30.3	28.6	26.1
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.3	28.3	26.2

2003թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, առանձնատների 1քմ շինության շուկայական միջին գները, 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 4.7%-ով, իսկ 2002թ. առաջին կիսամյակի համեմատ 9.5%-ով:

2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում, արձանագրվել են հողերի 3060 օտարման գործարքներ /1387.04 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում, Երևան քաղաքում` 86.83 հա/: Հողերի 1575 օտարման գործարքներն /1209.28 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 2930-ը հանդիսացել են առուվաճառքի, 122-ը` նվիրատվության և 8-ը` փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 48 գործարքներում /1.6%/, որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձիք:

2003թ. առաջին կիսամյակում, 2002թ. առաջին կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 87.5%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ` 6.4%-ով: Հողերի առուվաճառքներից 428-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 95-ը /12.07 հա/` Երևանում, իսկ 333-ը /103.22 հա/` մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 74 միավորը /75.61 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական, 326-ը /27.38 հա/` բնակելի կառուցապատման /տնամերձ/, 27-ը /11.52հա/` հասարակական կառուցապատման և 1-ը /0.77 հա, Կոտայքի մարզում/` արդյունաբերական օբյեկտների:

2003թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում գրանցված հողերի օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն կայունացման միտում:

Ստորև ներկայացվում է 2003թ. առաջին կիսամյակում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	141	9.47	149	38.93	0	0.00	219	16.90	58	16.67
Արագածոտն	53	11.83	1	0.10	0	0.00	133	111.97	52	5.48	0	0.00
Արարատ	12	47.53	59	6.16	4	0.11	424	135.07	137	12.11	4	0.11
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	241	229.46	80	7.91	5	0.42
Գեղարքունիք	1	10.00	0	0.00	2	3.30	175	307.27	29	3.42	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	67	58.81	15	2.29	0	0.00
Կոտայք	7	5.25	196	17.45	0	0.00	215	71.37	183	18.41	0	0.00
Շիրակ	0	0.00	1	0.05	0	0.00	141	149.35	26	1.37	5	0.12
Սյունիք	1	1.00	0	0.00	0	0.00	17	11.29	5	0.40	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	31	41.22	5	0.45	1	0.50
Տավուշ	0	0.00	0	0.00	1	0.06	5	2.40	6	0.40	1	0.01
Ընդամենը	74	75.61	398	33.23	156	42.40	1449	1118.21	757	69.14	74	17.83

2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 2930 առուվաճառքի գործարքներ, որոնցից 1523-ը՝ գյուղատնտեսական, 1392-ը՝ բնակավայրերի, 15-ը՝ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վաճառված 15 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 9-ը միավորը /3.53 հա/ գրանցվել են Երևանում, 1-ը /0.90 հա/՝ Արարատի, 3-ը /0.46 հա /՝ Գեղարքունիքի, 1-ական՝ Կոտայքի /0.77 հա/ և Տավուշի /0.04 հա/ մարզերում: 2003թ առաջին կիսամյակում Երևանում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 7 գործարքներ:

2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 1523, այդ թվում աճուրդ-վաճառքների 74 և դատարանի վճռով 10 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի անվանումը /նախկին շրջան/	Պետական սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	53	11.83	640.0	1960.0	1350.0	103	43.21	840.0	7600.0	2315.0
Ապարան						16	9.34	130.0	500.0	300.0
Թալին						8	42.17	200.0	1680.0	345.0
Ծաղկահովիտ						6	17.25	170.0	2100.0	290.0

Արարատի մարզ										
Մասիս						58	15.90	400.0	3100.0	1000.0
Վեդի						144	59.18	680.0	7200.0	1120.0
Արտաշատ	12	47.53	130.0	1180.0	325.0	222	60.0	1040.0	6060.0	2020.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						107	63.60	980.0	11150.0	2100.0
Արմավիր						65	40.05	650.0	4650.0	1240.0
Բաղրամյան						67	124.55	130.0	1000.0	380.0
Գեղարքունիքի մարզ										
Մարտունի						1	0.30	100.0	4000.0	475.0
Գավառ	1	10.0	145.0	145.0	145.0	12	4.04	420.0	1100.0	615.0
Սևան								100.0	1000.0	406.0
Վարդենիս						162	302.93	60.0	1180.0	230.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Լոռու մարզ										
Գուգարք						5	1.62	500.0	6000.0	1135.0
Ստեփանավան						15	14.44	180.0	4000.0	320.0
Ալավերդի						18	15.49	360.0	5500.0	750.0
Տաշիր						20	23.55	100.0	400.0	230.0
Սպիտակ						1	0.49	500.0	3300.0	1060.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	0.25	668.0	1445.0	1060.0	107	26.65	520.0	10100.0	3515.0
Եղվարդ	5	5.00	825.0	825.0	825.0	90	33.44	380.0	6100.0	1965.0
Հրազդան						18	11.28	250.0	4000.0	685.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						112	99.37	550.0	760.0	650.0
Ամասիա						7	19.98	80.0	525.0	210.0
Արթիկ						3	2.51	140.0	800.0	440.0
Աշոցք						3	2.03	60.0	210.0	130.0
Անի						16	25.47	240.0	800.0	280.0
Սյունիքի մարզ										
Սիսիան						15	10.68	90.0	1500.0	220.0
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան	1	1.00	256.0	256.0	256.0			120.0	2000.0	330.0
Մեղրի						2	0.61	400.0	4240.0	875.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						25	21.22	260.0	4000.0	950.0
Վայք						6	20.00	120.0	3400.0	380.0
Տավուշի մարզ										
Իջևան						3	0.60	530.0	4000.0	1125.0
Նոյեմբերյան						2	1.80	100.0	8340.0	700.0
Բերդ								100.0	2000.0	460.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքերի մեծ լինելը կապված է հողերի տեղասրությունից և հողատեսքերից:

2003թ. առաջին կիսամյակում, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի 795 առուվաճառքների գործարքներ, այդ թվում աճուրդ-վաճառքների 255, ուղղակի վաճառքի 2 և դատարանի վճռով 1 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջանի) անվանումը	Պետական սեփականություն հանդիսաող մակեի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսաող բնակեի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1000.0	44.30	44.30	44.30	48	45680.0	120.0	3800.0	2280.0
Ապարան						4	9140.0	120.0	670.0	310.0
Թային								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Մասիս	32	32205.0	110.0	170.0	120.0	69	54660.0	280.0	3680.0	835.0
Վեդի						31	31974.0	115.0	1000.0	500.0
Արտաշատ	27	29400.0	152.0	340.0	210.0	37	34522.0	175.0	2460.0	655.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						55	50092.0	280.0	3700.0	1305.0
Արմավիր						21	24256.0	180.0	2440.0	685.0
Բաղրամյան						4	4800.0	120.0	280.0	200.0
Գեղարքունիքի մարզ										
Մարտունի						9	9910.0	120.0	320.0	222.0
Գավառ						17	20664.0	180.0	1000.0	520.0
Սևան								120.0	280.0	210.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Ճամբարակ						3	3600.0	78.0	180.0	140.0
Լոռու մարզ										
Գուգարք						9	13736.0	78.0	3800.0	585.0
Ստեփանավան						4	3352.0	78.0	340.0	140.0
Ալավերդի						1	5000.0	78.0	450.0	200.0
Տաշիր						1	840.0	78.0	180.0	130.0
Մայիտակ								78.0	180.0	160.0
Կոտայքի մարզ										
Արովյան	57	47425.0	95.0	945.0	190.0	116	110765.0	180.0	4300.0	1540.0
Եղվարդ	134	120800.0	70.0	300.0	190.0	50	59007.0	180.0	3670.0	2035.0
Հրազդան	4	4800.0	109.0	111.0	110.0	16	13795.0	180.0	4120.0	1325.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						26	13710.0	120.0	2500.0	440.0
Ամասիա								120.0	180.0	132.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Անի								78.0	430.0	190.0
Սյունիքի մարզ										
Միսիան						3	3080.0	78.0	450.0	230.0
Գորիս						2	920.0	78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	380.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						4	3952.0	78.0	990.0	290.0
Վայք						1	500.0	78.0	1000.0	210.0
Տավուշի մարզ										
Իջևան						6	4000.0	78.0	1600.0	385.0

Նոյեմբերյան								78.0	670.0	210.0
Բերդ								78.0	670.0	170.0

Պետք է նշել, որ հանրապետությունում 2003թ. առաջին կիսամյակում գրանցվել են նաև պետական սեփականություն հանդիսացող 57, որից 47 գյուղատնտեսական նշանակության հողերի անհատույց տրամադրման գործարքներ: 2003թ. առաջին կիսամյակում անհատույց սեփականաշնորհվել են 70.74 հա ընդհանուր մակերեսով հողեր, որից 0.57 հա բնակելի կառուցապատման /տնամերձ/, 70.17 հա գյուղատնտեսական նշանակության: Ընդ որում 7 գործարքներ են գրանցվել Երևանում /0.34 հա/, 18-ը՝ Արարատի /6.22 հա/, 12-ը՝ Արմավիրի /34.00 հա/, 6-ը՝ Գեղարքունիքի /7.26 հա/, 7-ը՝ Շիրակի /20.59 հա/, 5-ը՝ Վայոց Ձորի /1.54 հա/ և 2-ը՝ Տավուշի /0.79 հա/ մարզերում:

2003թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2752 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.3%-ը: Ընդ որում վարձակալության գործարքների 20.2%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. առաջին կիսամյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 7.6%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 19.7%-ով: 2003թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 167 բնակարանների, 57 բնակելի տների, 587 հասարակական, 48 արտադրական նշանակության օբյեկտների, 7 ավտոտնակների և 1886 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 618 վարձակալության գործարքների քանակները 2002թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 83.9%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 26.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում վարձակալվել են 13266.75 հա ընդհանուր մակերեսով հողեր /250.15 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 12830.38 հա կազմում են գյուղատնտեսական /որից 968.12 հա նախկին պահուստային/, 83.15 հա բնակավայրերի, 0.15 հա տրանսպորտային, 102.92 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 5711.72 հա , որից 5622.73 հա գյուղատնտեսական նշանակության հողեր, առավել փոքր՝ 18.02 հա, Տավուշի մարզում, որից 13.20 հա գյուղատնտեսական, 0.31 հա բնակավայրերի հողեր են:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 7247.90 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. առաջին կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	9	956.0	101	613.61
Արարատ	22	4724.0	188	898.73
Արմավիր	0	0.0	29	336.86
Գեղարքունիք	17	1447.9	215	2085.42
Լոռի	0	0.0	45	132.85
Կոտայք	2	120.0	152	476.60
Շիրակ	0	0.0	61	700.24
Սյունիք	0	0.0	61	140.89
Վայոց Ձոր	0	0.0	50	184.07
Տավուշ	0	0.0	5	13.20
Ընդամենը	50	7247.9	907	5582.47

2003թ. առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2038 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.9%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 34.3%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 12.8%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 24.0%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից, իսկ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /37.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /19.1%/, առանձնատների /12.5%/, և հողերի /25.0%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 998 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2002թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 31.0%-ով, իսկ 2002թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 0.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 316.21 հա մակերեսով հողեր /0.38 հա Երևանում/, որից 314.41 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 195.75 հա, որից 194.97 գյուղատնտեսական նշանակության:

2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/ համապատասխանաբար, 119 և 39 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների 0.5%-ը: 2003թ. առաջին կիսամյակում հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2002թ. առաջին և երկրորդ կիսամյակների համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է համապատասխանաբար 26.9%-ով և 52.0%-ով: 2003թ. առաջին կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 21.5%:

2003թ. առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 4070 գործարքներ, որոնց քանակը 2002թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 28.5%-ով, իսկ 2002թ.

երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 34.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.8%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /39.2%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն